ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՄՅՈՒՍ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 07.10.2022Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի աշխատակարգի 23-րդ կետով՝ հանձնաժողովը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և մյուս անդամների պաշտոններում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածուներ առաջարկելու մասին հարցերը հանձնաժողովի 07.10.2022թ. արտահերթ նիստում քննարկել առանձին-առանձին, հետևյալ ընթացակարգով՝

1) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու մասին հարցի քննարկման սկզբում մինչև տասնհինգական որպե տևողությամբ ելույթներով հանդես են գալիս թեկնածուին ներկայացնելու իրավասություն ունեցող անձը, այնուհետև՝ թեկնածուն.

2) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մյուս անդամների պաշտոններում Ազգային ժողովին թեկնածուներ առաջարկելու մասին հարցի քննարկման սկզբում մինչև տասնհինգական որպե տևողությամբ ելույթներով՝ ըստ թեկնածուների ազգանվան այբբենական հաջորդականության, հանդես են գալիս յուրաքանչյուր թեկնածուին ներկայացնելու իրավասություն ունեցող անձը, այնուհետև՝ թեկնածուն.

3) ելույթից անմիջապես հետո թեկնածուին ներկայացնող անձին և թեկնածուին կարող են հարցեր տրվել.

4) թեկնածուին ներկայացնող անձին և թեկնածուին հարցեր տալու, հարցերին պատասխանելու, ինչպես նաև հարցերին արձագանքելու համար հատկացվում է մինչև երեքական որպե.

5) մտքերի փոխանակություն, որի ժամանակ ելույթների համար հատկացվում է մինչև հինգական որպե.

6) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու մասին հարցի քննարկման ժամանակ՝ մինչև տաս որպե տևողությամբ եզրափակիչ ելույթով հանդես է գալիս թեկնածուն.

7) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մյուս անդամների պաշտոններում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածուներ առաջարկելու մասին հարցի քննարկման ժամանակ՝ մինչև տասական որպե տևողությամբ եզրափակիչ ելույթներով՝ նույն հաջորդականությամբ հանդես են գալիս թեկնածուները.

8) բաց քվեարկություն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների պաշտոններում ընտրելու Ազգային ժողովին թեկնածուներ առաջարկելու վերաբերյալ քվեարկություններն իրականացվում են առանձին-առանձին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ